

ՄՊԱՍԱԼԱՐՆԵՐԻ ՏՈՀԽՄ

Սորասալարների տոհումը յառաջացել է քուրդ աղգից, որ վախչելով Զօրադետի Բագրատունի, այսինքն Կիւրիկեան թագաւորի մօտ, քրիստոնէութիւն է ընդունել և պատուի արժանանալով բնակութեան համար ստացել Խոշունին¹⁾:

Այս առհմի նախահօր անունը յայտնի չէ, ոչ էլ նրա Գուգարք դալու թուականը: Ամենահին անդամը համարում է Խոսրովը, որ վիշտակւում է Հաղբատի վանքի արձանագրութեան մէջ²⁾, սրա որդին եղել է Աւագ Սարգիսը, իսկ թոռը՝ Զաքարիէն: Հյու երեքի մասին էլ սրտութիւնը լրում է, վիշելով մէայն նրանց անունները: Խոսրովի որդի Սարգսի մասին ասում է, որ սա պատերազմներում վարժուած նշանաւոր հերոս է եղել, և վրաց Թամար թագուհուց պատապար կարգուել և իր սեպհականութիւն ստացել է Լոռին «Մը-թաւար Սոմիսէթիս» տիտղոսով³⁾:

Հյու Սարգիսն ամուսնացել է Կայեան բերդի և նրա դաւառի վրայ իշխող⁴⁾ Քուրդ իշխանի քրոջ⁵⁾ հետ և վրաց Գէորգի թագաւորից այս Քուրդ իշխանի որդի⁶⁾ Սարգունի փոխարէն Ընիի կառավարիչ կարգուել⁷⁾:

Սարգիսը մեռել է 1187 թուին⁸⁾ և թաղուել իրենց տոհմական գերեզմանատանը՝ Սանահնում:

Ըւանդութեան ասելով այս Սարգիսը, այսինքն Զաքարիէի և Խվանէի հայրը, եղել է Ջիօզը, որ կոչուել է նաև Քուջա-պապ. (գաճաճ պապ), որովհետեւ գաճաճ է եղել: Սա յայտնի է եղել իւր արտակարգ քաջութեամբ: Մի անդամ վրաց Թէհմուրուտիշան թագաւորը նրան պատգամաւոր է ուղարկում Զիլիսուլիթան շահի մօտ: Ճահը նայել է նրան, նրա կարճ հասակին, չափազանց երկար պեխներին ու մորուքին և արհամարհանքով ասել: «Ձեր երկրում մարդ չկար, որ քեզ ուղարկեցին»:

— Մարդը մարդկանց մօտ, ինձ էլ քեզ մօտ ուղարկեցին, ուստասիսնել է Ջիօզը:

¹⁾ Վարդ. Բարձ. Եր. 188.

²⁾ Դաւթի Կիւրիսալին կողմում... Ես Աւագ Սարգիս միաբանեցաւ ու նշանիս... և ետուն մեզ պատարագ... իմ հօրն Խոսրովին... (Ըստ ջինը նկատել է Բլոսսետ. Hist. de la Géorgie, Add. p. 257.)

³⁾ Blosset. o. c. Ip. p. 309,

⁴⁾ Կիր. Դանձ. Եր. 122.

⁵⁾ Վարդ. Բարձ. Եր. 140.

⁶⁾ Կիր. Դանձ Եր. 125.

⁷⁾ Վարդ. Բարձ. Եր. 127.

⁸⁾ Խելապէս երկում է տապանագրից.

Սյս պատասխանը շահին դիւր չէ եկել, ուստի և կամենաղով նազրել նրան, հրամացել է ճաշին մածուն տալ, որպէսզի նրա երկար պեխերն ու մորուքը մածնոտի. Ճիօշը այս հասկացել է և ասել, թէ մեր երկրում մածունը մեղրով են ուտում. Խսկոյն մեղր են բերում. Ճիօշը մի բրդուջով մեղր է վերցրել, և յետոյ մեղրուտած մատերով պեխերն ու մորուքը ար' և առանց մածնի մէջ ձգելու կերել է:

Ճահը հստանել է սրա հնարս գիտութեանը. բայց չի մոռացել նրա հւամարձակ պատասխանը, ուստի և վերադարձին հինգ ձիաւոր է ուղարկել, որ նրան սպաննեն Ճիօշը քաշել է թուրը և հնդին էլ բապանել, ձիերն առել, դարձել շահի մօտ: «Երկիրդ շատ անապէհով է, ասել է նա շահին, ամէն քայլափոխում աւագակներ են յարձակւում, ահա հնդին սպանել եմ, բեր ինձ պահապաններ տուր, անունս էլ «քեօտկումը» (գլխաւոր մատեան) գրին, որ իմացուի, թէ ես մըտել եմ քո երկիրը, որպէսզի եթէ երկրումդ մի բան պատահի, դու լինիս պատասխանատու:»

Ճահն անճարացած պահապաններ է տուել և անվուանդ հասցրել մինչև սահմանը ¹⁾:

Սարգիսը թողել է երկու որդի, Զաքարէ և Խւանէ: Զաքարէն, որ «մի քաջ և արժանաւոր զօրավետ էր», ²⁾ և իւր անձի մէջ ամենափայտուն կերպով միացրել էր յարդկացին և աստուածացին բոլոր առաքինութէ ւնները, իւր հօրը փոխարինող Գամրիւսել սոլասալարի մահից յետոյ ³⁾: Թամար թագուհուց, ոչ ուշ քան 1191 թուականը ⁴⁾, սպասալար (զօրքի ընդհանուր հրամանատար) է կարգւում. իսկ Խւանէն՝ աթաբէկ (հայրիշխան):

Զաքարէն և Խւանէն վրաց և Հայոց զօրքերի դլուխն անցած առան թուրքերից Ճիրակը, Ընթերդը, (Դրագածուի, մի մասը) Ընին, Թջնին, Դուինը, Կարսը, Գետարակը, Զարեքը. Միայն Խլաթի պատերազմում Խւանէն գերի ընկաւ և ազատուեց Զաքարէի օգնութես մբ և իւր Թամաթա աղջիկը Խլաթի տէր Մելիք Աշրաֆին կութեան տալով ⁵⁾: Բացի այս տիրապետութիւններից, սրանք հարկաւու դարձրին Կարնոյ սուլթանին, աւերեցին պարսից շատ քաղաքները և Շտրապատականը ⁶⁾: Ելսալիսի՝ մեծ՝ յալթութիւններով Զաքարէն և Խւանէն դարձան վրաց արքունիքի առաջին նշանաւոր և սիրելի անձնաւորութիւնները, հայոց ամեմամեծ իշխան.

1) Պատմել են ինձ Օձուն գիւղում:

2) Hist. de la Géorgie trad. par Brossot I. P. p. 430.

3) Ibid. p. 420.

4) Ibid. Additions. p. 269.

5) Վարդ. Տարձ. եր. 138.

6) Կիր. Դանձ. եր. 95.

ները, որոնց ենթարկում էին վրաց ձեռքն անցած հայաստանի մի մասը, Ենի մազբաբաղաբով¹⁾:

Սակայն յետին ժամանակներում Խւանէն «լսաբուելով»²⁾ կամ «Հրապուրուելով», Թամար թագուհուց³⁾ և կամ համոգուելով վրաց Յովհաննէս կաթողիկոսի հրաշքով⁴⁾ ընդունեց վրաց օրդոդքս կրօնը, և կառուց Ըստաբավի հոգակառոր վանքը:

Խոկ Զաքարին միանդամայն հաւատարիմ մնալով լուսաւորչական կրօնին, ցանկացաւ մի քանի փոփոխութիւններ մտցնել նրա մէջ և բանակում պատարագի շարժական վրան ունենալ, որի պատճառով և ահապին աղմուկներ բարձրացան, Ելս մասին կըխօսենք, երբ կաշխատենք որոշել լինդհանրապէս Բորջանուի գաւառի և մասնաւորապէս հաղպատ ու Սանահին վանքերի հոգեպրականութեան կատարած դերը։

Զաքարիան մեռաւ 1214 կամ 1215 թուին⁵⁾ և ամփոփուեց Սանահնում, իրենց տոհմական գերեզմանատանը։

Նրա մահից յետոյ սպասարար կարգուեց եղբայրը՝ Խւանէ աթարէկը. Սա ցրջողութեանք մի քանի պատերազմներ վարեց Վրաստան եկած հոների դէյ, 1214 թ. առաւ Զամբորը, 1219 Ռուտը իւր մեր. ձա՛խաց դղեակներով, բայց ոչ բոլորը: Խոկ 1220 թուին վրաց Գեօրգի Լաշա թագաւորի հետ ընկաւ մոնղոլ և թաթար զօրքերի ցետեից, որոնք, թուով մօտ 20.000, մտել էին Գուգարք և կոտորում էին բնակիչ ներին. Սակայն Կոտոման գետի⁶⁾ մօտ յաղթուեցան և հազիւ կարողացան փախչելով իրենց կոսնքը ազատել: Թաթարները յառաջեցին մինչև Ջամշուլուէ, որի ճարակ անելով ամեն ինչ ինչ⁷⁾։

Վեց տարի յետոյ Խւանէն նորից Վրաց և հայոց զօրքի պառխն անցած 40,000 զօրքով գնաց կուռելու խորազմէից թագաւոր Զալ-էդ-Դինի զօրապետ եկելի-խանի դէմ, որ եկել էր Լոռին աւերելու: Սևանաց լճի մօտ մի յաղթութիւն տանելուց յետոյ նա պարտութիւն

¹⁾ Եւ հինգ արա պատճառով ժամանակակից գրիչները լիշտակում են, այսպէս. Յաշխարհակացիթեան Զաքարիէ և եղբօր նորա. կոմ 1214 թ. / տէրութեան տեղայաց, Խւանէի Մի ուրիշը 1218 թ. ի հազարապետութեան հայոց և Վրաց, Խւանէի և մանկանն ըստնշահի (Զաքարիէ որդու). Մի ուրիշը, 1235. լիշխանութեան իշխանաց իշխանի Խւանէի և որդւոյ նորին Ըւագիւ, Ալիշան.

²⁾ Վարդ. Բարձ. եր. 321.

³⁾ Կիր. Գանձ. եր. 96.

⁴⁾ Hist. de la Géorgie trad. par Brosset I. P. p 451.

⁵⁾ Hist. de la Géorgie rad. trar Brosset. Additions p. 269.

⁶⁾ Վարդ. Բարձ. եր. 142.

⁷⁾ Brosset, o. c. I. p 493.

կրեց, Լոռին պաշարուեց, բայց կարողացաւ ընդդիմադրել ¹⁾: Ապա երբ ինքը ձալալ-էդ-Դիլնը իւր անթիւ զօրքով մտաւ հայաստան, Գառնի գիւղաքալաքի մօտ Խւանէն պարտութիւն կրեց և յետ քաշուեց: Ձալալ-էդ-Դիլնը ցառաջելով առաւ Թփիլիսը, և սրի ճարակ դարձրեց ինչպէս Վրաստանի, այնպէս և Գուգարքը՝ բնակիչներին: Նա վերցրեց նաև Խլաթը, և իրեն կնութեան առաւ Խւանէ աթարէկի դուստր և Մելիք Ծշրաֆի կին Թամաթալին, որ Ձալալ-էդ-Դիլնի սպանուելուց յետոյ փախստ Վրաստան. և որովհետև այս ժամանակ Լաշա թագաւորը մեռել էր՝ ուստի ապաւինեց նրա բոյք Ռուսուդան թագուհուն ²⁾: Խւանէ աթարէկը և Ռուսուդան թագուհին մի մի նամակով դիմեցին հոնորիոս Գ պապին, օգնութիւն խնդրելով թաթարների գէմ, սակայն պապը պատասխանեց (1224), թէ չի կարող օգնել ³⁾:

Սյս անցքից երեք տարի յետոյ 1227 թուին մեռաւ Խւանէն ⁴⁾ և թաղուեց Ախտալացի իւր կառուցած վանքում ⁵⁾:

Խւանէի մահից յետոյ սպասալար Հարգուեց որդիին Աւազը ⁶⁾: Սրա ժամանակ թաթարները շարունակելով իրենց արշաւանքները՝ տարածուեցան ինչպէս մարտին Վրաստան, Թրիալէտ, Գուգարք (Սոմիսէթ), Ջաւշէթ, Ձաւախաք, Կղարջք, Կարս, Անի և Գուին ⁷⁾:

«Օմէն տեղ լլքն էր դիակներով. քարտաքները, դիւղերը, դաշտերը, անտառները, լեռները, ձորերը, բոլորը, բացի բերդերից, որոնք կարողանում էին խուսափել: Օմենայն տեղ տիրում էր ողբն շ. կոծը... հայրեն ու մայրերը տեսնում էին իրենց որդիներին՝ կոտորած, որդիները՝ իրենց կեանք տուողների դիակները փոռած, ուրիշները իրենց եղբայրներին, իրենց ձնողներին, իրենց քոյքերին, որպէս որս տարուած, իրենց կանանցը, իրենց որդոցը, իրենց բոլոր հարըստութիւնը ցրուած իրենց աշքերի առաջ ⁸⁾»:

Այս ժամանակներում թաթարաց Զարմաղանը առաւ Գանձակը, իսկ Զաղատա գօրավարը պաշարեց Լոռի քաղաքը, որի տէր Գահնշահը, Զաքարէ սպասալարի որդին, առնելով Նազովդ կնոջն ու որդի-

¹⁾ Բառ իբն-ալ-Սմէիր արաբ պատմագրի (լիշ. Brosset. Hist. de la Géorgie, I. p. 513).

²⁾ Զամէեան. հ. Պատմ. Դ. եր. 202—204.

³⁾ Brosset Hist. de la Géorgie, Additions p. 302.

⁴⁾ Brosset: Hist. de la Géorgie, Additions 333, իսկ ըստ Վարդ. Բարձ. 1229 թ. եր. 118.

⁵⁾ Վարդ. Բարձ. եր. 148.

⁶⁾ Brosset. o. c. I. p. 514.

⁷⁾ ibid. եր. 514.

⁸⁾ Brosset. Hist. p. 515.

Ներին, Տաճկաբար իջաւ ձորը և թագնուեց մի քարայրի մէջ, Կա քաղաքի վերակացութիւնը յանձնեց իւր աներ աթաբէկ Սաթունին, իսկ սա յուսը քաղաքի պարիսպների ամրութեան վրայ զրած՝ իրեն-ների հետ ուսուլ խմելով էր ժամանակին անցկացնում: Այս միջոցին թշնամիները պարիսպը քանդելով մտան քաղաքը և սպանեցին աթա-բէկ Սաթունին 1237 թ. և բնակիչներին սրից անցկացրին, գտան Քահնշահի գանձերը և ապա յարձակուելով միւս քաղաքների վրայ առան Դումանիսը, Օմաշուտէն, Թիֆլիսը և ապն:

Եւագ սպասալարը ամրացաւ Կոյշեան բերդում: Գաւառի բնա-կիշներն էլ եկան ապաստանեցին բերդի շուրջը: Եյս իմանալով թա-թարուց Խոտողատա գօրապետը մեծ զօրք առած եկաւ պաշարեց բերդը, և շատ անգամ պատգամաւորներ ու զարկելով Սւագի մօտ, ա-ռաջարկեց անձնատուր լինել և չվախենալ: Սւագ իշխանը կամենա-լով բարեկամութեամբ հեռացնել նրանց, իւր առջիկը և մեծ գանձ տուեց Խոտողատացին: Սակայն սա աելի ևս ստիպեց անձնատուր լի-նել: Այս ժամանակ թէ բերդի մէջ և թէ շուրջն ապաստանածները սկսեցին նեղուիլ Տարաւից: Զարահատուած շատ միեր և անասուն-ներ տարան տուին թաթարներին, խնդրելով որ թով տան մի քա-նիսին ջուր տանելու, նրանք էլ թով տուին և շատերը դիմեցին գէ-տիի ջուրը, այս ժտմանակ նրանց արդիլեցին և պահանջեցին, որ ի-րենց կանանցն էլ համոզեն վայր իշնելու, ապա թէ ոչ բուրրին կը կոտորին. կանայք իրենց ամուսիններին ազատելու ցանկութեամբ վայս իջան:

Սւագը յուսահատ որոշեց անձնատուր լինել, ուստի և իրենց տան վերակացու Գրիգոր Տղացին պատղամաւոր ուղարկեց Զարմաղա-նի մօտ, որ բանակած էր Սւանայ լճի ափին: Սա անմիջապէս հրա-մայեց Խոտողատացին վերցնել բերդի պաշարումը և Շագին իւր մօտ ուղարկել: Եւ երբ Սւագը ներկայացաւ նրան և իւր հպատակութիւնը յացտնեց, Զարմաղան վիրադարձեց նրան իւր երկրները և շատ զե-րիներ արձակեց¹⁾:

Քահնշահն էլ Սւագից խորհուրդ հարցնելով գնաց թաթարաց մօտ և իւր հպատակութիւնը յացտնեց. նրանք մեծ պատուով ընդու-նեցին նրան, և վերադարձին թէ Ընին և թէ նրա միւս երկրները²⁾: Կարճ միջոցից յետոյ Շաւագն ու Զահնշահը վրայ Թուսուղան թագու հու կողմից պատղամաւոր դնացին Զարմաղանի մօտ և նրա հեն դաշն կապեցին այն պայմանով, որ Թուսուղան թագուկին յանձնէ թաթարաց ձեռը իւր որդի Դաւթին, որին Զարմաղանը Թիֆլիսի և ամբողջ Պրաստանի վրայ թաղաւոր կարգել կըտայ³⁾.

¹⁾ Կիրակ. եր 148—151.

²⁾ Brosset Hist. de la Géorgie 1. p. 517.

³⁾ ibid. p. 821.

Թուսուղան թագուհին ընդունեց այս պայմանը և Դաւիթը մի քանի թաւատներով գնաց դէպի Զարմաղանը, Զահնշահ և Աւագը, որ «շատ յարգուած էին թաթարների մօտ», ընդառաջ եկան նրան և տարան ներկայացրին Զարմաղանին, որ յարգանոք ընդունելով նրան՝ վերադարձրեց ամբողջ Վրաստանը և Զամշուլդէն, որ վերցրել էին Խօզէր Նոցինն ու Անջուրգան, Աւազի մասնակցութեամբ¹⁾:

Ցետոյ երբ այս մասին իմաց տուին Բատու խանին, Հրաման եկաւ, որ սրանց գլխաւորներին ուղարկեն իւր մօտ. Աւստի և Զաղատա Նոցինը ուղարկեց աթարէկ սպասարար Աւազին և Խղաթի սուլթանին. Աւազի հետ գնաց և նրա սենեկապետ (chambellan) Դաւիթը, Ելսալցխաչի կառավարիչ Խւանէի որդին, ճանապարհին Դաւիթը առաջարկեց Աւազին՝ թոյ տալ իրեն խանի մօտ ձևանալ իբր տէր, իսկ ինքը Աւազը՝ իրը ծառայ, որպէսզի եթէ սովանել տայ, ինքը զոհ գնայ, որովհետեւ սովորաբար տիրոջն են սպանում և ծառաչին ազատ թողնում: Աւազը դժուարացաւ համաձայնէլ, բաց երբ հասնում են Բատու խանին, Դաւիթը առաջ է անցնում և ներկայանում է իբր տէր: Խանը հիանում է նրանց տեսնելով և շատ պատուվ պահում իւր մօտ բաւական ժամանակ: Տեսնելով Բատուի բարութիւնը, նրանք համոզվում են, որ կեանքից զրկուելու ոչ մի երկիւղ չի սպասնում. Աւստի երբ մի օր խանը նրանց կանչեց, Աւազը առաջ անցաւ, խանը գարմացած նկատեց նրան, թէ չգիտէ, որ իրեն հետեւող նրա տէրն է և որ նա նրանից առաջ է անցնում:—Մեծ և յաղթող տէր, պատասխանեց Դաւիթը ժպտալով, սա է տէր և ես նրա ծառան, Խանը բացատրութիւնը լսելով գովեց Դաւիթի տիրասիրութիւնը, գրեց այդ մասին Մանգու խանին և ուղարկեց նրանց նրա մօտ՝ Ղարաղուրում: Կարճ միջոցից յևտոյ թաթարները Ռուսուղանի որդի Դաւիթին և ուղարկեցին Բատու խանի մօտ, որ երկու տարի պատուով լւր մօտ պահելուց յետոյ, ուղարկեց Մանգու խանին, Ղարաղուրում. Ացսանդ նա բաւական լաւ ընդունուեց խանից և բնակուեց Աւազի հետ, որ աւելի առաջ եկած էր այնտեղ: Սրանք այստեղ հնդ տարի մնացին, Ծյո միջոցին Ռուսուղան թագուհին, որ ամեն միջոցների դիմել էր Լաշացի որդի Դաւիթին սպանելու, որպէսզի իւր որդի Դաւիթը թագա որէ, մեռաւ (1247), զահը մնաց թափուր: Աւստի և Զահնշահը, սրա որդի Զաքարին, որ այդ ժամանակ սպասարար էր կարգուած, «փիլխոսփայ և հաետոր» Սարդիս Թմոկիւելու և մի քանի ուրիշ իշխանների հետ Լաշացի որդի Դաւիթին տարան Բատու խանի մօտ, որպէսզի թագաւոր կարգել տան Բատու խանը սրանց պատուով ընդունեց, պահեց իւր մօտ Զաքարէին, իսկ

1) Ibid I. 521.

միւսներին Դաւիթի հետ ուղարկեց Մանգու խանի մօտ Ղարաղուրում. Ըստեղ երկու հայ իշխաններ, հօրեղօր որդիներ, աշխատում էին թաղի տարբեր թրինածուների համար. Ջանշահը կամենում էր թաղաւորացնել Գէորգի Լաշացի որդի Դաւիթին, իսկ Աւագը՝ Թուսուդանի որդի Դաւիթին:

Վերջապէս խանը յարդեց երկու հայ իշխանների խնդիրներն էլ և երիտ Դաւիթներին էլ թագ տուեց և ուղարկեց Վրաստան¹⁾:

Վերադարձաւ և Աւագը, որին ընդառաջ եկան բոլոր թաւատներն ու իշխանները, որոնց մէջ և Ջանշահը, ինչպէս և Եգարսխան, «որին միմիայն թագաւորի ախտղուն էր պակասում²⁾», Երբ սրանք մօտեցան, Աւագը կարծում էր թէ Եգարսխանը կիջնի ձեռց, բաց սա, որ սաստիկ հպարտ էր, չկամեցաւ ցոյց տալ այս յարգանքի նշանը և ոչ էլ գրիմախաննել Աւագին. Այս տեսնելով Աւագը զայցացաւ, մըտ բակի մի հարուած տուեց նրան և հրամացեց իւր ստորադրեալներին նրան ամօմթաբար վայր դղորել դետնին, որ և իսկոյն կատարեցին, որով այս յարգելի մարդը կորցրեց իւր յարգանքը և վկնտուեց, պատուից ձգուեց և այդ օրից արհամարհանքի ու Տիժաղի առարկայ դարձաւ վրաց իշխանների համար³⁾:

Վախուշտի ասելով (եր. 6), Աւագը ամուսնացել էր մի թագ իշխանուհու հետ, որից ունեցել էր մի դուստր Խոշաք անունով.

Մի առ ժամանակ էլ ապրելով իւր հայրենի երկրում, Աւագը մեռաւ և թաղուեց Ալստալացի վանքում, իւր հօր մօտ⁴⁾: Նրա մահուան թուականը ըստ Վարդանի 1250 է⁵⁾:

Աւագի մահից մի քիչ յետոյ Լաշացի որդի Դաւիթ թաղաւորը չուլառու խանի մօտից վերադառնալով անցաւ աթաբէկ Աւագի երկրով. մտաւ Քջնի, լաց լինելու Աւագի վրաց Այստեղ տեսնելով նրա այրուն, Գոնցացին, որ Ռաֆայիլ Էրիստաւ Կալսաբերի գերդաստանից էր և շատ գեղեցիկ, սիրեց նրան, թագուհու տիտղոս տուեց և տարաւ իւր թագաւորութիւնը⁶⁾ և նրանից ունեցաւ Դիմիտրի որդին, որ թագաւորեց իրենից յետոյ⁷⁾. Աւագի մահից յետոյ թաթարները նրա կազուածները տուին Ջանշահի որդի՝ Ջաքարիա Գին, որովհետև Աւագը որդի չունէր, այլ մշայն մի աղջիկ Խոշաք անունով, ինչպէս և մի ապօրինի որդի, որին Խոշաքը առնելով իւր մօտ սնուցեց

Համար

1) Brosset. o. c. p. 542.

2) Անդ.

3) Անդ.

4) Վարդ. Բարձ. եր. 148.

5) Անդ.

6) Brosset. o. c. եր 554.

7) Ստեփան Օլբեկան թ. հ. եր. 167. & Brosset o. c. եր, 555.

իր հարազատ եղբօր: Բայց կարճ միջոցից լւսով թաթարները առան Ըւադի երկիրը Զաքարէից և տուին Ըւադի կին՝ Վարդուշ Գոնցացին: Սա շայն Սմբատ Օղբելեան իշխանը կամենալով տիրապետել Ըւադի երկրներին, թաթարների թուղթուութեամբ սպանեց նրա կին Գոնցացին, իսկ սրա դուստր Խոշաբին թաթար Սահիբ իշխանին կնութեան տուեց¹⁾:

Զաքարիա Գ. Ըւադի փոխարէն սպասարք կարգուեց²⁾ և բացի մանր մունր պատերազմներից, 1257 թուին հուշառուն խանի, և Կիւրիկիծան թագաւորութեան վերջին շառաւիղ Թաղիաղին իշխանի հետ արշաւեց Ծորեստան և Միջագետք³⁾:

Զաքարիա Գ. սպասարքը, այս «նշանաւոր և ամենայն առաքինութեամբ լի մարդը»⁴⁾, մոտածեց ապստամբի թաթարների դէմք և փախաւ վրաց Նարին—Դաւիթ (Թուսուդանի որդի) թագաւորի մօտ, Ղութաթիս, թագաւորը նրան մեծ չարգանքով բնդունեց, բայց միաւ ժամանակ նրա մօտ մնալուց յետոյ խանը (ըստ Վարդանի հուլաղու) եղումելով որ ոչ մի վնաս չի հասուցանիլ նրան՝ կանչեց իւր մօտ և սպանել տուեց նրան, այս «նշանաւոր և յարդելի» մարդուն⁵⁾: Նրա մահուան վրայ դառնապէս սպացին վրացիներն ու հայերը՝ և մանաւանդ նրա հայրը Ջահնշահ, որ և նոյն օրը սրտակտուր լինելով մեռաւ և թաղուեց Քորացրում⁶⁾:

Բացի Զաքարիայից Ջահնշահն ունէր երեք որդի՝ Խւանէ; Բ. Արտաշիր, Ըւադ Բ.⁷⁾:

Սրանցից Խւանէն chef des mandators էր, որի մօտ հաւաքուեցան վրաց թաւատները և նրա հետ ուղեկցեցին Դիմիտրուն խանի մօտ, թագաւոր նշանակելու⁸⁾ (1272 թուին),

Եւ երբ մեռաւ Ծբաղա խանը և թաղաւորութիւնը անցաւ նրա եղբայր Ահմէդին, Խորասանի նոյնինն ապստամբեց, Խւանէն Դիմիտ-

¹⁾ Վրաց ազգիւրների ասկով Գոնցացան սպանուեց թաթարների մօտ, (1263 թ.), իւր դուստր Խոշաբի թելադրութեամբ, որ ամուսնացած էր նա Սեղլիագդապ-Խոջան Սմես-էդ-Դինի հետ (Brosset. o. c. 569) ապա ամուսնացաւ Սաթուն Մանկաբերդի երու հետ, (անդ. եր. 554), որից իւրեց Սահիբ Դիւլանը. (անդ. եր. 575). Խոշաբին ունեցաւ մի որդի Զաքարիա անունով, որ Դիւրդի Վ ժամանակ մի քանի պատերազմների մտանակցեց. (անդ. եր. 641—642).

²⁾ Brosset. o. c. I. 567.

³⁾ Զամշեան Գ. եր. 257.

⁴⁾ Brosset. o. c. I. 568.

⁵⁾ Brosset o. c. I. 568. Զամշեան Հայ. պատմ. Գ. եր. 269.

⁶⁾ Վարդ. Բարձ. եր. 153.

⁷⁾ Զամշեան միշտէ է և մի ուրիշը, Սարգիս. Դ., 260.

⁸⁾ Brosset. o. c. I. p. 586.

րի թագաւորի հետ գնաց Ահմէդին օգսելու, և յաղթութեամբ ¹⁾ վերադարձաւ:

Օրոտաշիրի և Աւագ Բ. մասին տեղեկութիւններ յկան:

Խւանէ Բ. ունեցաւ մի դուստր և երկու որդի, Զահնշահ և Աղրուդան²⁾: Դուստրն ամուսնացաւ Տարսայինի որդի Զալալի հետ. Զահնշահը ամիր սպասալար կարգուց ³⁾, իսկ Աղրուդան, որ ամուսնացած էր Սիթիսաթունի հետ ⁴⁾, յայտնի չէ, թէ ինչ եղաւ:

Զահնշահի որդին էր Մխարգրձելլը, որ ամուսնացած էր Սաթուն աթբէկի դուստր Վանանէի հետ և 1245 թուին դեռ ևս կինդանի էր և որի սերնդից են այժմեան Պավլինով Մխարգրձելլի վրաց իշխանները ⁵⁾, իսկ Աղրուդալի որդին էր Զահնշահ Կ. ⁶⁾:

Սակայն սրանք հետզհետէ կորցրեցին իրենց նախկին մեծութիւնը և հեռացան քաղաքական ասպարէզից: Բայց յետին ժամանակներում կրիին սկսեցին փայտի և Արդութէն իշխանի անունով վերակոչուեցին Արդութեան Երկայնաբազուկ, իրեւ կալուածատէրեր տիրապետելով Սանահնի զիւղին և սրա շրջակացրին, սրանք մեծ խնամք տարան Սանահնի փանդի վրայ՝ դարերի ընթացքում վերանորոգելով և պահպանելով նրան: Նոյն իսկ այժմս նրանց օժանդակութեամբ է վերանորոգութիւններ կատարուում:

Եւ որովհետև այս տոհմի նշանաւոր անձերի գործունէութիւնը յի վերաբերում մեր ուսումնասիրելլիք վայրին, ուստի և մենք լրում ենք նրանց մասին, յիշատակիլով միայն Յովսէփ արքեպիսկոպոսին, որ 1795 թ. այցելելով իւր Հայրենի Սանահնի և Հաղբատի վանքերը, տեսաւ նրանց ամայութիւնը և «մղկտաց նրանց վրայ», ինչպէս և Դաղստանի հերոս Մովսէսին, որի արձանը կանգնած է Թեմուր-Խան - Շուրացում:

Սպասալարների տոհմի ընկնելով կրկին բարձրացաւ Օրբէլեանների տոհմը, որոնցից Տարսայինին վրաց Դիմիտր թագաւորը Սյուրատի հետ միասին տուեց նաև Աւագի ու Զահնշահի կալուածները 1284 թուին ⁷⁾:

Այդպիսով Օրբէլեանները, որ շատ հին ժամանակից իվեր որպէս Օրբէթ ամրոցի տէրեր բաւական նշանաւոր դեր էին խաղացել ընդհանրապէս Վրաստանի և մասնաւորապէս՝ մեր ուսումնասիրելլիք վայրի հասարակական կեանքում, վերստին հասան իրենց նախկին

¹⁾ Brosset. o. c. I. p. 600.

²⁾ Թալլինի արձան. լիշ. Brosset. Additions p. 362.

³⁾ Brosset o. c. Ad. եր. 362.

⁴⁾ Մարմաշէնի արձ. լիշ. Brosset. Additions. եր. 362.

⁵⁾ Եացրած. Կառաջ և ձեռանքներու պատճեանութեան տակածութեան մեջ:


⁶⁾ Արձանագր. Գանձաւարի:

⁷⁾ Հայէնան, պատմ. Հայոց գ. եր. 282.

բարձրութեան, և խլեցն սպասալարների տոհմից առ աջնորթէնը:

Նրանց դործունէութեան մի միայն մի փոքր մասն է վերաբերուն մեզ զբաղեցնող վայրին, ուստի և մենք չենք պատմիլ ոչ նրանց ծագումը և ոչ զարգացումն ու անկումը և բաւանականում ենք միայն ասելով՝ որ ընդունում ենք Պատկանեանի այն կարծիքը, թէ Օրբէ-եանները մեր Մամկոնեաններն են, որ Տայքից Գուշարը անցնելով մի մասը Վրաց արքունիքում այնպէս մեծ սպատուի է հասել, իսկ միւս մասը բնակուել է Խսեղում, ուր նրանց դամբարան Ս. Գրիգորի վանքը մինչև այսօր էլ վիրայում է նրանց մասին:

ՍՊԱՍԱԾՄԻՆԵՐԻ ՏՈՀՄԸ



Սարդիս Ա. ամիր սպասալար Դիօրդի Ա և թամարի ժամանակ, ամուսնացած Քիւրդ իշխանի քրոջ հետ. † 1187. Թաղուած Սանահնում.

Զաքարէ Ա. ա- խանէ. աթա- Ավանէ, Նանէ Դաֆ կամ Շու- միր սպասալար բէկ. կինը Խո- կամ Նանան, ա- շան, ամուսնա- ցած Քիւրդ իշխ- անը քած բառ Բ. Ավարի- կանը քածաւո- գոր կամ Դա- րի հետ. թա- լիք Խաչէնի; զուած է Հաղ- բատում;	Թամարի կամ Խոսքով Բ. ամու- սնացած Մարդիք Օ- նադունի՝ Նազարէ Խոնցա Սա- րդի Սաթունը բա- սպանուել է մանզար- ներից Լուսին առ- նելիս. 1237 թ.	Թամարի կամ Խոսքով Բ. ամու- սնացած Մարդիք Օ- նադունի. 1203 թ. և լատոյ Մարդիք Աշ- րաֆի 1204 թ. և սպասալար աթա- րէկ. Կարծես ա- սպասալար է մի մանզարների է մի մանզարներ իշխան- ութեանի էր դեռ հան հետ † 1250.	Թամարի կամ Խոսքով Բ. ամու- սնացած Մարդիք Օ- նադունի. 1230 թ. և լատոյ Մարդիք Աշ- րաֆի 1230 թ. և կամ Դամար էր- դինի հետ 1243 թ.

Զաքարէ Դ. ամուսնացած սպասալար Սիթիի իշխան Սարդի դատեր հետ. † 1261. ա- միր սպասալար էր.	Խանէ Բ. ման- գատորների պետ.	Արտաշիր, Աւագ. Բ. Զաքարէ Դ. ամու- սնացած Սարդի պետ.	Խոշաբ Բ. ա- մուսնացած Սի- թի-խաթունի դունի, և ապա Սա- դիթ-Դիւանի հետ	Խոշաբ Բ. ա- մուսնացած Սի- թի-խաթունի դունի, և ապա Սա- դիթ-Դիւանի հետ

Արտաշիր, ա- մուսնացած Տար- սայինի սրդի Զա- լտի, հետ.	Ճանճան Բ. ա- միր սպասալար, ադիստանդանի պետ. Ճանճատոր- ների պետ.	Ազրաւզա Բ. ա- մուսնացած Սի- թի-խաթունի հետ.	Ազրաւզա Բ. ա- մուսնացած Սի- թի-խաթունի դունի	Զաքարէ Դ. Դիորդի Փառակե- ղի ժամանակ:

Միարդիքի՝ ա- մուսնացած Վա- նանէի, աթարէկ Սարդի դատեր հետ. կինոգանի էր դեռ 1295 թ.	Ճանճան Դ.